ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

— մայիսի 2023 թվականի №---Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի №123Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 13-ի №210Ն, 2014 թվականի հուլիսի 2-ի №235Ն որոշումները և հաշվի առնելով «ՔՐՈՍՍՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի ապրիլի 12-ի №02.04 և Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ապրիլի 11-ի №06.2/4/4774-2023 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի մարտի 25-ի «ՔՐՈՍՍՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը համարների և կոդերի զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» №123Ա որոշման՝

1) №1 հավելվածը լրացնել №6 աղյուսակով՝ համաձայն հավելվածի.

2) №2 հավելվածի 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ ենթակետով.

«6) հատուկ ծառայության «118» կոդը Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի օպերատիվ հեռախոսակապի («թեժ գիծ») ծառայության կազմակերպման նպատակով:».

3) №2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին և 4.2-րդ կետերով.

«4.1 Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի համար հատուկ ծառայության «118» կոդի օգտագործումը և գործարկումն անվճար են:

4.2 Լիցենզավորված անձը պետք է գործող և կնքվելիք փոխկապակցման ծառայությունների պայմանագրերում նախատեսի, որ փոխկապակցված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերից «118» կոդին կատարվող զանգերի վերջնավորման ծառայության դիմաց վճար չի գանձվում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՔՐՈՍՍՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
-- մայիսի 2023թ.